ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ
УПРАВЛЕНИЕ

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

N 01-23

«03» 03 2017թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2017 թվականի փետրվար ամսվա ընթացքում ընդունված որոշումները, արձակված կարգադրություններ չկան:

Առդիր 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 07 » փետրվարի 2017 թ. — թիվ 4- Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգքի 16- րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով.

Ո Ր Ո Շ Ու Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքներում կազմավորել երկու ընտրական տեղամաս.
2. Ընտրական տեղամասի կենտրոնը տեղավորել՝
   1) Մշակույթի տանը – Մաշտոցի 43 հասցե
   2) Մանկապարտեզի շենքում-Մաշտոցի 39 հասցե:
   3) Մշակույթի տանը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել Մշակույթի տան տնօրեն Եպրաքսյա Եդյանին:
   4) Մանկապարտեզում տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող համարել մանկապարտեզի տնօրեն Խաթուն Հակոբյանին:
3. Սույն որոշման մեկական օրինակը ուղարկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքները տիրապետողին:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավար Գևորգ Ներսիսյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր — Գ. Ներսիսյան

2017 թվականի 07 փետրվարի
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» փետրվարի 2017 թ. թիվ 5-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ - ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակարանային, աշխարհագրական, օբյեկտի անվանակոչման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2389-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Ոսկեհատ համայնքի ավագանու 14.08.2006թ. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի փողոցների անվանակոչման, տների ու տնամերձերի համարակալման մասին» թիվ 2 որոշումը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ `

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքում գտնվող քաղաքացի Ալբերտ Մինասյանին պատկանող 04-081-024-031 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ հասցե` Մաշտոցի 36 բնակարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր` Գ. Ներսիսյան

2017 թվականի 7 փետրվարի

գ. Ոսկեհատ